ԺԱՄԱՆԱԿԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՀՈԳԵԳՐԱՄՄԱՆ

ՄԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր - քաղաքական գործիչ, հոգեգրամմա, հասարակական գիտակցություն, արժեքներ, եսակենտրոն տիպ, սոցիոկենտրոն տիպ, դեպի մարդը կողմնորոշվածություն, անձնային առանձնահատկություններ:

Անձը, որպես միջավայրի արդյունք և ծնող, վերջինիս հետ մեկ ամբողջական համակարգ է կազմում: Եվ, համաձայն համակարգի կարևորագույն սկզբունքներից մեկի, մի տարրի փոփոխությունը հանգեցնում է մնացած բոլոր տարրերի փոփոխությանը, միջավայրային փոփոխությունները անմիջականորեն հանգեցնում են անձի ներքին փոփոխությունների:

Այսօր, մեր երկրում տեղի ունեցած և ընթացող իրադարձությունների արդյունքում «ստեղծվում է» նոր տիպի հասարակական անձ՝ իր պահանջներով և հավակնություններով: Իսկ այդ պահանջների ու հավակնությունների, ինչպես նաև ապագայի հանդեպ դիրքորոշումների և մտածական քարտեզների համարժեք իրականացումն ու զարգացումը ապահովում են քաղաքական դեմքերն՝ իրենց վարած քաղաքականությամբ:

Հայաստանում տեղի են ունենում հասարակական գիտակցության, ինչպես նաև արժեքային համակարգի, հասարակական դիրքորոշումների փոփոխություններ, որոնք էլ հանգեցնում են քաղաքական գործչի հոգեբանական կերպարի, առանձնահատկությունների նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխության:

Գոյություն ունեն գործունեության տեսակներ, որոնք հոգեբանական պահանջներ են ներկայացնում իրենով զբաղվող մարդուն: Այսպիսին է նաև քաղաքականությունը, որը բավականին բազմաբնույթ հոգեբանական պահանջներ է ներկայացնում քաղաքական գործչի հոգեկանին:

Մ. Վեբերը, ելնելով քաղաքական վարքագծի շարժառիթներից և նպատակներից, առանձնացնում է անձերի երկու տիպ. ա) քաղաքականության համար ապրողներ և բ) քաղաքականության հաշվին ապրողներ: [1] Քաղաքականության համար ապրողների նպատակն է ծառայել հասարակությանը՝ իրականացնելով հասարակական ակտիվ հարաբերություններ: Իսկ քաղաքականության հաշվին ապրողների գլխավոր նպատակը փառք և հարստություն ունենալն է: Ներկան և ապագան կապվում են արժեքներով: Մինչհեղափոխական Հայաստանում հիմնականում քաղաքականության հաշվին ապրողներն էին գերիշխում, որոնց վարած քա-

ղաքականությունը ստեղծել էր հարմարվող, լատենտ ագրեսիվությամբ, պասսիվ պահանջներով ու հավակնություններով հասարակություն:

Մերօրյա քաղաքական դաշտում տարանջատում ենք «քաղաքականությամբ զբաղվողներ» և «քաղաքական գործիչներ» հասկացողությունը: Հետհեղափոխական քաղաքական իրավիճակային խնդիրների լուծումների արդյունքում ածանցվեցին քաղաքականությամբ զբաղվողների մի մեծ խումբ, որում ներառվածները ոչ միայն քաղաքականության հետ առնչվող գիտական գիտելիքի պակասություն ունեն, այլև՝ քաղաքական գործչի հոգեգրամմայի կարևոր առանձնահատկությունների կրողները չեն: Քաղաքականությամբ զբաղվողները պետք է դառնան դեռևս քաղաքական գործիչներ:

Իսկ քաղքական գործիչները պետք է ունենան հոգեբանների կողմից առանձնացված այնպիսի հատկություններ, ինչպիսիք են վերլուծական և համակարգային, դեդուկտիվ մտածողությունը, պրոգնոստիկական մտածողության կոմպեսատորային ձևը (ժամանակից առաջ ընկնելու և կանխատեսելու ընդունակություն), շփման հաղորդակցման ընդունակությունը, հուզական հավասարակշռվածությունը, լսելու ընդունակությունը, ստեղծարարությունը, բարոյական որակները, կարգապահությունը, օբյեկտիվություն, ազնվությունը, հոգեբանական նրբանկատությունը, սկսբունքայնությունը, ինքնավերահսկողությունը, իննքնակատարելագործման ձգտումը, զարգացած խոսքը, այլոց վրա ազդելու և իրենց հետևից տանելու կարողությունը: [2, էջ 278-282]

Այսօրվա քաղաքական գործչի հոգեգրամայում հասարակությունը կարևորում է հատկապես հետևյալ հոգեբանական առանձնահատկությունները. ազնվությունն ու արդարության զգացումը, դեպի մարդը կողմնորշվածությունը, բարձր բարոյական որակները, կարգապահությունն ու պարտաճանաչությունը, նպատակասլացությունը, օբյեկտիվությունը:

Հոգեբանական գիտությունը, ըստ իշխանության նկատմամբ ունեցած վերաբերմունքի, քաղաքական գործիչներին բաժանում է՝ եսակենտրոն և սոցիոկենտրոն տեսակների: «Եսակենտրոնները», ձգտելով լինել իշխանության կենտրոնում, հատկապես սևեռված են իրենց անձնական հաջողությունների, հայտնի դառնալու, որոշակի արտոնություններ ունենալու վրա: Անձի քաղաքական գործունեությամբ զբաղվելու առանցքային պատճառներից է իշխանություն ունենալու անհրաժեշտությունը (Վ. Քրամնիկ, Դ. Վերոֆ, Դ. Յուլիմնա, Գ. Լասուել, Դ. Վինտեր, Ե. Վ. Եգորովա, Ե. Շեստոպալ և այլք): [3] «Սոցիոկենտրոնն» իր առաքելությունը տեսնում է հասարակությանը ծառայելու մեջ: «Եսակենտրոն» տիպի քաղաքականությամբ զբաղվողները առավել մեծ թիվ են կազմում, քան «Սոցիոկենտրոն»-ները:

Նախորդ քաղաքական ավտորիտար համակարգում ձևավորված քաղաքական մշակույթը քանդվել է և, այսօր, նոր արժեքների հիման վրա են ընթանում քաղաքական իրադարձությունները և ձևավորվում է քաղաքական նոր մշակույթ, քաղաքական գործչի նոր կերպար: Քաղաքական կերպարի հասարակական ստերեոտիպերն են՝ ուժեղ, կամային, խելացի, փորձառու լինելը: Այսինքն, չնայած դրական լավատեսական սպասումների՝ հասարակության պահանջի և ներկայիս քաղաքական կերպարի միջև հոգեբանական անհամարժեքություն կա:

Քաղաքական գործչի գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է անձի համարժեք հոգեբանական առանձնահատկություններով: Ուստի, առաջարկում ենք հոգեբանական թրենինգների շարք՝ որոնք ուղղված կլինեն այդ առանձնահատկությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Գրականության ցանկ

1. Вебер М., Избранные произяедения. М.: Прогресс, 1990 г., с. 797.
2. Поманова Е., 99 популярных профессий, психологический анализ и профессовграммы, 2-е издание, Питер, 2006г, 464с.
3. Райгородский Д., Психология и психоанализ власти, Хрестоматия, том 1, Самара: БАХРАХ, 1999г., 608с.

Марине. Саакян, Психограмма современного политического деятеля - В Армении произошли изменения как в общественном сознании, системе ценностей и общественных установках, что в свою очередь привело к изменению психологического портрета политического деятеля, вместе с тем, изменению отношения общества к его особенностям.

Из нашего исследования стала явным то, что в психограмме современного политического деятеля особенно подчеркиваются следующие психологические особенности: честность и чувство справедливости, ориентированность на человеке, чувство собственного достоинства, высокие моральные качества, дисциплина и ответственность, целеустремленность, объективность, ответственность.

Marine Sahakyan, Psychogram of modern politician - The personality with the environment, as its result and generator, forms an entire system. And, according to one of the most important principles of the system (the change of one element leads to the change of all the others), changes in the environment directly lead to personality's internal changes.

As a result of already occurred and current events in our country " is creating" a new type of personality with his demands and ambitions. And the equivalent realization and development of those demands and ambitions ensure the political figures wih their conducting policy.

In Armenia have been changed the social consciousness, as well as the system of values, the social positions, which leads to a change in the attitude of society to a politician's psychological image and characteristics.

Our discussion shows that in the psychogram of today's politician are distinguished especially the following psychological characteristics: honesty and sense of justice, human orientation, high moral qualities, discipline and conscientiousness, purposefulness, objectivity, responsibility.